

Ս. ՊԵՏՏԵՐՈՒՐԿ, 19 նոյեմբերի: Երէկ հասան այստեղ արտասահմանից ֆրանսիական, գերմանական և իտալական դեսպանները, վերջինը իր հրաժեշտի թղթերը ներկայացնելու համար: Իտալական նոր դեսպանը դեռ էջ նշանակված: Կրօնշատի բանկի մէջ կատարված գեղձումների մաքին դատաստանական գործը կը քննվի լուսնավորի վերջը Ս. Պետերբուրգի նահանգական դատարանի մէջ: Սինոդը զբաղված որոշ վարձատրութիւն նշանակելով հուկոր ծիսակատարութիւնների համար: Եւր է տարածված, որ զիւղական կալուածական բանկի բացումը կը կայանայ 1883 թ. փետրվարի 1-ին: „Бирж. Вѣд.“ լրատրը հաղորդում է, որ Կախանովի մասնատրովը մինչև նոր տարին երեւի կը քննէ

—Այդ «համագումար ժողով» ինքզինքնին ա-
տուանող անձերը ուրիշ առարկություն չ'ալ կը-
նեն: Հայաստանեայց եկեղեցւոյ օրինքը, եպիսկո-
պոս մը դատելու կուլտած ժողովրէի մը մէջ հարկ
է որ երեք եպիսկոպոս զանաւին: Արդ Պօլսոյ կրօ-
նական ժողովը ընդհանուր Տաճկաստանին հայոց
բունական դատաւորը ըլլալով հարկ է որ մէջը
րեք եպիսկոպոս զանաւին:—Այս առարկութեան
մէջից չ'ր կայ: Սակաւն հիմա է ժամանակն այս

այն բոլոր հարցերը, որոնք մտնել են նրա նախագծի մէջ:

ՀԱՅԿԱ, 19 նոյեմբերի: Ստատուս-տեղութեան Գիրք երէկ այցելեց խաղաղական արտաքին գործերի մինիստր Մանուկեան:

ԿԱՅԻՐԷ, 19 նոյեմբերի: Եգիպտական կառավարութիւնը համաձայն է Արաբի-փաշայի մեղադրական գործից հանել ապանու-թիւններին և հրդեհ գցելուն վերաբերեալ կէտերը: Ենթադրւած է ընդ միշտ աքսորել Արաբի-փաշային Եգիպտոսից:

ՍՈՖԻԱ, 19 նոյեմբերի: Լրագրական լու-րերը բոլորական կառավարութեան և վա-տիկանի մէջ կատարուող բանակցութիւններին մասին Բոլորայի մէջ կաթողիկ եպիսկո-պոսութիւն հիմնելու վերաբերութեամբ շիջող չեն:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 նոյեմբերի: «Որէնք-ները ժողովածուն» միջ հրատարակւած է կայսերական Մեծութեան ամբողջ տնտես-ւորական մեծ գրքերի նկարագրութիւնը: Էջերը կը վերադառնայ Մեծ Իշխան Վազի-միր Ալէքսանդրովի:

ԽԱՐԿՈՎ, 20 նոյեմբերի: Կուրսկի, Պոլտա-վայի և Լոգոօի մէջ ձիւնի կոյտեր կան: Գնացքները կանգնում են:

ՆԻՎՈՒԱՆ, 20 նոյեմբերի: Ենթադրւած է խորհով-նիկոյայեանի երկաթուղու տե-ղափոխական միջոցները ընդարձակել:

ԱՐԽԱՆԳԵՒՍԿ, 20 նոյեմբերի: Գործարա-նական արդիւնաբերութիւնը նահանգի մէջ երկու տարւոյ ընթացքում ընկաւ 600,000 ռուբլ գումար:

ՄՈՍԿՎԱ, 20 նոյեմբերի: Նոյեմբերի 16-ին Դատաստանական պալատայի մէջ քննվեցաւ Մոսկովայի առևտրական բանկի մէջ վատնե-լու մասին դատաստանական գործը:

ՎՕԼՍԿ, 20 նոյեմբերի: Այստեղ եղանա-կը տաք է: Նաւագնացութիւնը վերականգն-վեցաւ:

ԲԻՍԶԱՆ, 20 նոյեմբերի: Հասարակական բանկը դադարեցրեց փոխառութիւնը ար-ժէքից երկու ամիսներով:

Կ. ՊՈԼԻՍ, 20 նոյեմբերի: Բ. Գուռը հա-մաձայնում է ռուսաց ընկերութեանը յանձ-նել երկաթուղու կառուցումն Բաթումից

Կիարեքերի վրա մինչև Միջերկրական ծո-վը: Առաջին միւնիստր նշանակւած է Ա.Տ. մեդ-վեֆիկ, պետական խորհրդի նախագահ Գորիֆի, պատերազմական միւնիստր Հուսի-փաշա:

ՀԱՅԿԱ, 20 նոյեմբերի: Այստեղի ռու-սաց դեսպանութիւնը այսօր ճաշ է տալիս ի պատիւ միւնիստր Գորիֆի:

ՓԱՐԻՋ, 20 նոյեմբերի: Հասարակական կարծիքը անհամաձայն է 1882 թ. բիւդ-ժետի 108 միլիոն դեֆիցիտի պատճառով:

ԲԵՐԼԻՆ, 20 նոյեմբերի: Հեղեղին են-թարկւած տեղերի համար առ այժմ նշա-վակւած է կէս միլիոն մարկ: Այստեղ հա-սաւ աւտորիական թագաժառանգը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 նոյեմբերի: «Սրա-ՅԵՏ» լրագրի հարցերում է, որ ռուս-նողական անկարգութիւնները կողմնի և Ս. Պետերբուրգի համալսարանների մէջ ար-ձագանք գտան Կիւլի և Խարկովի համա-լսարանների և Խարկովի անասնաբուժական ինստիտուտի մէջ: Նոյեմբերի 15-ին Ս. Պե-տերբուրգի և Կազանի ուսանողներին համա-կրութիւն յայտնելու համար գումարւած ուսանողներ ժողովը ցրվեցաւ բեկտորի պա-հանքի համաձայն, բայց հոգաբարձուն ստիպւած էր զօրքեր և պոլիցիա հրաւի-րել: Ուսանողները խոստացան այլ ևս ժո-ղովներ չանել: Դատախոսութիւնները շա-րունակվում են, մեծամասնութիւնը կարգա-պահութիւն է կամենում: Խարկովի համա-լսարանի մէջ նոյնպէս հարկաւորվեցաւ պո-լիցիայի և զօրքերի միջամտութիւնը, բայց այստեղ էլ ուսանողները խօսք տուին այլ ևս ժողովներ չանել: Նոյեմբերի 16-ին Խարկովի անասնաբուժական ինստիտուտի մէջ ուսանողները վճռեցին շարունակել ան-կարգութիւնները մինչև բոլոր համալսա-րանները և ինստիտուտների փակելը: Մի ուսանողի թաղման ժամանակ ահաբեկ ամ-բոխի ներկայ-ւթեամբ վրդովող ճառեր ար-տասանվեցան: Միւս օրը ուսանողները սպառնում էին տեսչին, եկան զօրքեր և պոլիցիա, որոնց ներկայութեամբ ժողովին մասնակցողները ցուցակագրված էին: Նոյեմ-բերի 18-ին ցուցակագրվածները նորից ժո-

ղով կազմեցին: Պոլիցիայի չը հասնելու պատճառով նրանց անկարելի եղաւ կալա-նաւորել: Համալսարանի և ինստիտուտի մէջ դատախոսութիւններ չեն դադարել:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 նոյեմբերի: Առաջին ութ ամիսների ընթացքում ստացվել են մաքսահարկեր 66,224,907 ռ. 1881 թուա-կանից 13,535,067 ռ. աւելի: НОВОЕ «Вре-мя» լրագրի հարցերում է, որ աշխարհա-գրական ընկերութիւնը յարաբերութիւններ է կապում գիտական միւս հիմնարկու-թիւնների հետ Սերիլի մանրամասն նկա-րագրի պատճառով: Տօմսօլ-Սարատովի եր-կաթուղին յանձնված է դանձարանին:

ՄՈՍԿՎԱ, 21 նոյեմբերի: Լեօնտօվսկու յանձնված է ժողովրդական տօնի նախա-դիւծ կազմել թագադրութեան համար: Ին-ժեներ Ֆարբիցիուս նախագէտը Կրեմլի և Մոսկովայի միւս պալատների լուսաւորու-թիւնը: Գեկտեմբերին դատաստանական պա-լատան կը մեղադրէ Վալդեյի և Վալդի-միրսկի երգիչաւ դատաւորներին, որոնք մե-ղադրված են կաշառակերութեան մէջ:

ՏԱԾԿԵՆՏ, 21 նոյեմբերի: Այսօր առա-ւօտեան 11 ժամին երկրաշարժ կար: Լսելի եղան ստորեկրեայ չորս հարուածներ:

ՄԱՐԻՈՒՊՈԼ, 21 նոյեմբերի: Այստեղ ցրտեր սկսվեցան: Սամարայի, Սիբիրի և Աստրախանի մէջ ցուրտ է, Վալդայի վրա սառուց է լողում:

ԵԱԼՏԱ, 21 նոյեմբերի: Ղրիմի հարաւ-յին ափի վրա տաք է: Ծաղիկները ծաղ-կում են:

ԿԱՅԱՆ, 21 նոյեմբերի: Չինուորական դատարանը բանտի վերակացուն սպանե-լու համար կախաղանի դատապարտեց Սո-լովեօվին:

ՓԱՐԻՋ, 21 նոյեմբերի: Ֆրանսիական մամուլը վրդոված է, որ գերմանական պար-լամենտը արգելեց Ֆրանսիայի լեզուն էլ-զաս-Լօտարինգիայի նահանգական մասնա-ժողովի մէջ:

ԲԵՐԼԻՆ, 21 նոյեմբերի: Լուր է տարած-ված, որ արեւելահայ-Պրուսիայի և հարաւա-յին Ռուսաստանի երկաթուղիների մէջ դաշ-նագիր է կապված ռուսաց ապրանքները

Կենդանութեան վրա անցկացնելու համար Գանցիգի փոխարէն:

ՀԱՅԿԱ, 21 նոյեմբերի: Այստեղ գումար-վում է Միջազգային կոնֆերենցիա պրոս-տիտուցիայի դէմ միջոցներ դործադրելու համար:

ՍՈՖԻԱ, 21 նոյեմբերի: Յանկօլ արձակ-ված է բանտից: Բուլղարի պրեմիեր փոխ-ված է:

ԼՕՆԴՈՆ, 21 նոյեմբերի: Պարլամենտի նիստերը յետաձգված են մինչև փետրվարի 3:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 նոյեմբերի: «Սրա-ՅԵՏ» լրագրի հարցերում է, որ նոյեմ-բերի 20-ին Մեծ Իշխան Վազիմիր Ալէք-սանդրովիչ ընտանեկով վերադարձաւ Ս. Պե-տերբուրգ: Երբ գնացքը կանգնեց, թագու-հին վագոնի մէջ այցելեց Մեծ Իշխանուհի Մարիա Պաւլօվնային: Նկարիչ Մալկօվսկի նոր աշխատանքներ ներկայացրեց թագու-հուն: Բարոն Իկսկուլի տեղ Լիխանիայի նահանգապետ նշանակված է Շելվիչ:

ԵԱՐՈՍԼԱՎԼ, 21 նոյեմբերի: Գեմիզօվսկի լիցէյի մէջ նոյեմբերի 15-ին եղած ժողովի պատճառով Կազանի և Ս. Պետերբուրգի ուսանողներին համալրութիւն յայտնելու համար, արձակված են իրանց ծնողների մօտ 11 ուսանողներ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 նոյեմբերի: Խարկո-վի համալսարանի և անասնաբուժական ին-ստիտուտի մէջ անկարգութիւններն են ըս-պատում: Թէպէտ համալսարանական և գիւն-ւորական իշխանութիւնները դիմել են եռանդու միջոցների: Կիւլի համալսարանի մէջ կարգապահութիւնը ըստ երեւոյթի վե-րականգնված է: «НОВОЕ ВРЕМЯ» լրագրի-րը հարցերում է, որ Կոստանով մասնաժո-ղովին առաջարկվեցաւ մի նախագիծ նա-հանգական պոլիցիայի կառավարիչներ նշա-նակելու մասին նահանգական ժամադրմե-րի վարչութիւնների կառավարիչների տեղ: Բացի այն, որ մեծացւում է առեւտրը առանց վկայականի խմբիցներ ծախելու համար, ենթադրված է մեծացնել և քրեա-կան պատասխանատուութիւնը: «Голосъ» լրագրի հարցերում է, որ Կարմիր խաչի ընկերութիւնը մի հիւանդանոց է հիմնում զիֆտերիտով հիւանդներին բժշկել Լիւմա-նի հօմէօպատիական դեղերով բժշկելու համար:

Խմբագիր—հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

տեսակ խնդիրներ յարուցանելու: Քսան տարիէ ետքը այս շարժում մտքերնին եկաւ թող պատ-րիարքական տեղապահը ընտրուի լիմնայ, անկէ վերջը կրնանք այս քաներու վրայ մտածել: Բայց չէ, մեր եկեղեցականներու անձնական շահը ուրիշ կերպ կը թելադրէ, համառօտ մը ը-սենք: Համապատասխան ժողովը ամեն ջանք բրած էր որ իր ներկայացուցիչ 42 հոգեւոյ ցանկին մէջ չը դնէ որչափ չնար է խորէն սրբազանի բարեկամները: Սակայն Ազգ. ժողովը այդ ցան-կին մէջէն ընտրեց այնպիսի քահանայներ որք մեծամասնութեամբ խորէն սրբազանի բարե-կամները կրնային նկատուիլ: Քաղաքական ժողո-վոյ մէջէն մաս մ'ալ խորէն սրբազանի կողմնա-կիցներն ըլլալով շատ հաւանական էր որ սրբա-զանը տեղապահ ընտրուի: Այն ատեն ինչ կը-լան այսքան էնթիզիսին, այսքան նենգութիւնն ներս. պարզապէս տեղը աշխատած պիտի ըլլան: Նայե-ցէք ինչ խորհրդակցեանց կը դիմեն, ինչ սոսկա-լի վատութեանց: Նման էր որ համապատաս-խան ժողովը չէր կարող մենակ կուտիլ Ազգ. ժողովոյ դէմ, մեծ աշխատից մը պէտք էր, և այդ դաշ-նակիցն ալ գտան, ձեռքից բաշան: Այս հայտը ողորմ ձեռքից բաշան և մեր և-կեղեցականներն ձեռք ձեռքի տուած են: Այն ինչպէս: Բոլոր մեր թերթերը ծանուցի-թէ Գուռը վաւերացուցեր է նորընտիր կրօնական ժողովը, և թէ յառաջիկայ շաբթուն նիստ պիտի ընեն: Սակայն երէկ երեկոյ մեր առած տեղեկու-թեանց նայելով այդ լուրը սոստ է: Գուռը տա-կալին չէ վաւերացուցեր: Ինչու: Երբ երկու ժա-մուան մէջ վաւերացուց բարեկամական ժողովոյ ըն-տրութիւնը, ինչ պատճառ այս ընտրութիւնը չը վաւերացնէ: Ինչ մեղք ունին այդ եկեղեցական-

ներն որք կրօնական ժողովոյ անդամ ընտրուե-ցան: Քաղաքական մեղադրանքներ են, ոչ. օտմ. կառավարութեան դէմ դաւաճանած են, ոչ. օտար հպատակ են, ոչ.—Չարմառալի իրողութիւն, միշտ այդ մարդկանց ու ըլլալը, ինչ գաղափար ունե-նալին ոչ որ դիտել, զի բոլորովին անձնաօթ ան-ձեր են, միամտաբար իրենց կրօնական պարտա-ւորութիւնները կատարող բարի տէրութիւնը, ահա յանկարծ իր նկատուիլն քաղաքական անձեր և Գուռն ալ հարկ կը տեսնէ անոնց վրայ տեղե-կութիւններ տալու: Յայտնի իրողութիւն է որ այդ դարձուածներն հայոց ձեռքով կը կատարուին: Երբ անտեսներ. կան զորս առ այժմ յիշատակել հարկ չենք տեսներ: Այս անձերը, որոց մին ձեռ-դէմ բաշայի խորհրդականն է հայոց գործոց մէջ, կը համոզեն բաշան որ չը վաւերացնէ այդ կրո-նական ժողովը: Այդ կրօնական ժողովը կրնան անանկ մարդ մը պիտի ընտրէ տեղապահ, որ կա-ռավարութեան հակառակ պիտի ըլլայ, օրինակ խորէն սրբազան կրօններ: Մինչև իսկ Ազգ. ժողովը ալ իբր կառավարութեան հակառակ ցուց տալու չափ կը վատանան: Եթէ կրօնական ժողովը կառավարու-թեան հակառակ է, բնական է որ Ազգ. ժողովը ուսկից ինքն ընտրուած է, այն ալ հակառակը ը-լայ կառավարութեան: Սակայն, կը պատասխա-նէ ձեռքից բաշա, ինչ պատճառ տանք և չը վա-ւերացնեն: Այդ անտեսներն մին ունի անանկ անցեալ մը որ տէրութեան դժգոհութիւն պատճա-ռած ըլլայ: Ասոր պատասխան տալը դժուար էր, ուստի հնարքներ փնտրուել էր: Մի քանի օր այդ ընտրութիւնը մի վաւերացնէ, կրնան, կամ մենք կը յաջողցնենք գործը: Այդ անձերը, կամ անձեր, ելլելով ձեռքից բաշային քովն, անմիջա-

պէս կը միաբանին համախոսը և կորոշեն որ Պոլ-տոյ եկեղեցականները չընդունին ընտրուած կրո-նական ժողովը: Եկեղեցականներուն ուղածն ալ այս էր: Ինչ կըլլայ հետեւութիւնը: Քանի որ Ազգ. ժողով և եկեղեցական ժողով իրարու կը հա-կառակին ձեռքից բաշայ ալ կը պատասխանէ թէ՛ ինչ ընեն, ինչպէս վաւերացնեն, դուք մէջեր-նիդ համաձայն չէք, դուք համաձայնեցէք որպէս զի բրածնիս մենք ալ գիտանք: Ձեր եկեղեցա-կաններն կրնան թէ՛ ձեր Ազգ. ժողովը ապօրէն գործ ըրած է, թէ՛ մենք վաւերացնենք այդ ընտ-րութիւնը Ազգ. ժողովին կողմնակցութեան ըրած կըլլանք և ձեր եկեղեցականներուն հակառակու-թիւն: Մենք զլիսացաւ շատ ունենք, ասոնց մօտիկ չենք կրնար ընել, մենք չէ՞զոք կը կրնանք, գա-ցեք մէջերնիդ համաձայնեցէք, անկէ մեղի եկէք: խորհրդաւոր չէ: Բայց բնական է որ կը ջա-նան այդ դարձուածներն քիչ շատ դադարին պա-հել: Հիմա Ազգ. ժողով և համապատասխան եկեղե-ցականաց ժողով իրարու հետ կը պատերազմեն, ու յաղթանակով պիտի տան: Ով որ ալ տանի յաղթանակով, մեր թշնամիները ուրախ դուարթ ձեռքերնին կը շփեն: Ազգ. ժողովը ալ ուրիշ կերպ անպիտանութիւններ կընէ: Մէկ մասը ար-դէն չեն ընտրուած, պակաս են: Մէկ մասը բողո-քած են հրաժարի, մէկ մասը սրտմտած ժողովի չը դար, միացած մասն ալ մէջերնին բաժանուած: Մեր առած տեղեկութեանց նայելով հրաժարա-կան խրկող և բողոքող ժողովականները ձեռքի տակէ միացած են դաւաճան եկեղեցականներուն հետ: Անգամ մը աշխարհուղ առջն բերեք թէ՛ այս միջոցին հայազգն ալ այսպիսի աղա-ղաւ, շահամու, անխիղճ, անսիրտ աշխարհա-կաններու և եկեղեցականներու հաճոյիցը, շա-

հոցը խաղաղեք եղած է: Աստուած ողորմի մեր տառապեալ ազգին: Ինչ ըսենք, անտա-ւին մէջ կային է իսկել, կայինն կոթը անտաւէն է: Մեր տունը քանդողը մենք ենք, մեր տունը աւերո-ղներ անոնք են որ կոչում ունեն դայն չեն պա-հելու:

Եկեղեցականաց ընթացքին դէմ մեծ դաշտով կայ: Երէկ «Մարտ» կծու յօդուածով մը կը պա-հանէր որ վանքերը արտօրովն այդ եպիսկո-պոսներն ու վարդապետները: Մեղի մնար, ասոնց մօրուրը ամբիւրով եկեղեցիներն ալ, ազգէն ալ դուրս կը հանվին:

Կրօնական ժողովոյ չը վաւերացուելուն լուրը-ն մանրամասն պարագայներն մեղ հաղորդելին վատանելի աղբիւրներ: Բայց ոսկայն մինչև այս վաղիկներն չենք ուզեր հաւատալ ստոյգ ըլլա-լուն, զի անհաւատալի կը թուի: Նիւթապէս ժա-մանակ չը կար նոր քննութեանց հետամուտ ը-լալու, մինչև յաջող թղթատարին կրնանք: Երա-նի թէ կարենայինք յաջող նամակով հաղորդել որ մեր տուած տեղեկութիւններն սխալ են: Բայց վախեմ թէ փախաւ ինձ մնայ:

Քաղաքական ժողովը կաշխատի որ բաժանեալ երեսփոխանաց մէջ համաձայնութիւն մը գոյաց-նէ: Բաժանեալը դանդաղ պատրուակներ յառաջ կը բերեն, բայց բուն նպատակներն խորէն սրբա-զանի դէմ է: Եթէ խորէն սրբազանի ընտրելու-թիւնը մէկ կողմ մնայ, պիտի հաշտուին:

Հայկակ

